

02.02.2012թ.

գ. Վանևան

Տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Վանևան համայնքի ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ և մարզպետարանի աշխատակից:

Ժողովի նախագահ Ն.Հարությունյան /համայնքի ղեկավար/

Ժողովի քարտուղար Ա. Խաչատրյան /աշխատակազմի քարտուղար/

Օրակարգ

1.Վանևան համայնքի ղեկավար Ն.Հարությունյան 2011թվականի կատարած աշխատանքների մասին:

Զեկուցողն մանրամասն ներկայացրեց Վանևան համայնքում 2011թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:

Հաշվետվությունում վեր հանվեց համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից ձեռնարկված միջոցառումները: Ինչպես համայնքի բյուջեի կատարման, այնպես էլ համայնքում առկա խնդիրների լուծման ուղղությամբ /համայնքի ղեկավարի հաշվետվությունը կցվում է/:

Հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքի ավագանին և բնակիչները:

Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Լ.Ղազարայանի կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Համայնքի ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ՝

1.Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան 2011թվականի կատարած աշխատանքների հաշվետվությունը գնահատել բավարար:

2.Պահանջել համայնքի ղեկավար Ն.Հարությունյանից և գյուղապետարանի աշխատակազմից 2012թվականի ընթացքում իրենց գործունեությունը նպատակաուղղել համայնքում առկա խնդիրների լուծմանը, համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման կատարմանը և այդ մասին պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և նակչությանը:

Ժողովի նախագահ՝

Ն.Հարությունյան

Քարտուղար՝

Ա. Խաչատրյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վանևան համայնքի ղեկավար Ն.Հարությունյան 2011թվականի կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր և ավագանու անդամներ, Ձեզ եմ ներկայացնում հաշվետվություն՝ 2011թվականին և իմ կողմից Վանևան համայնքում կատարած աշխատանքների և բյուջեի կատարման մասին:

Վանևան համայնքում կա 108 տնտեսություն և ապրում է 430բնակիչ, որից շուրջ 70%-ը փախստականներ են:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> և Հայաստանի Հանրապետության <<Համայնքային ծառայության մասին>> օրենքով, համայնքի ՏԻՄ-երը իրենց գործունեությունը հիմնականում նպատակաուղղվել են համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, համայնքում առկա սոցիալ-տնտեսական հիմանխնդիրների բարելավման հարցին: Այդ ընթացքում համայնքում իրականացվել է մի շարք ծրագրեր:

2011թ. գյուղապետարանի միջոցներով հարթեցվել և բարեկարգվել է գյուղամիջյան ճանապարհները, համայնքի ազգաբնակչության միջոցով մաքրվել է ոռոգման ցանցի ջրատարը, կատարվել է խմելու ջրագծի շուրջ 700գծմ. վերանորոգման և մաքրման աշխատանքները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ չնայած կատարված աշխատանքներ՝ համայնքում դեռևս առկա է մի շարք հիմնախնդիրներ, կապված ոռոգման ցանցի, խմելու ջրի, համայնքային կենտրոնի և գազաֆիկացման, որի հնարավորությունը գյուղապետարանը չունի, խնդիրների լուծումը ընդգրկված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրում և ներկայացվել է վերադաս մարմիններին:

2011թվականի ընթացքում համայնքի բնակիչների կողմից ստացվել է տարբեր բնույթի 12դիմում, որոնց տրվել է համապատասխան ընթացք և լուծում:

2011թվականի ընթացքում կայացել է ավագանու 8 նիստ:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Վանևան գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 հոգուց, իսկ համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի վարչական տարածքը 815հա է, որից վարելահող՝ 550հա, տնամերձ՝ 264 հա այլ տեսքի հողեր:

2011թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտները կազմում է 2999.0հազ. դրամ, որի հավաքագրումը գյուղապետարանի կողմից կատարվել է 70%-ով:

Բյուջեն ըստ սեփական եկամուտների մասին հետևյալն է.

h/h	Եկամուտների անվանումը	Նախատեսված /հազ.դրամ/	փաստացի /հազ.դրամ/	Կատարված %-ը
1	հողի հարկ	1800.0	1058.0	59
2	գույքահարկ	34.5	44.6	129
3	Հողի վարձավճար	1164.5	960.2	83

Բյուջեի ծախսը աշխատավարձի և սոց հատկացման հոդվածներով`

ա/աշխատավարձ` 3978.4հազ. դրամ

բ/սոց. հատկացում 915.0 հազ.դրամ

ՎԱՆԱԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`

Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ